ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 10, 1956 Общественные науки

Մ. Ադրամատեսյան

ԱՐՍԵՆ ԱՄԻՐՅԱՆԸ ԱԿԱՆԱՎՈՐ ԺՈՒՌՆԱԼԻՍՏ-ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍ

Արսեն Ամիրյանը պատկանում է հայ ժողովրդի այն արժանավոր զավակների թվին, որոնք վիթխարի ծառայություններ են մատուցել աշխատավոր մասսաներին, մարտնչել են ու զոհվել կոմունիզմի համար, բայց մինչև այժմ դուրս են մնացել մեր պատմաբանների ուսումնասիրության տեսադաշտից։ Բավական է հիշատակել, որ Ա. Ամիրյանի վերաբերյալ չկա գեթ մեկ բրոշյուր կամ նույնիսկ որևէ ծավալուն ու ամբողջական հոդված։ Վաղուց ժամանակն է այդ բացը լրացնելու և գրելու գիտական ուսումնասիրություն Ա. Ամիրյանի մասին, ինչպես նաև հրատարակելու նրա ընտիր երկերը։

Մեր այս հոդվածը նպատակ ունի միայն առավել ընդհանուր գծերով բնութագրելու այդ բոցաշունչ բոլշևիկին և համառոտակիորեն կանգ առնելու նրա ժուռնալիստական-հրապարակախոսական գործունեության վրա։

I

Արսեն Ամիրյանը ռևոլյուցիոն շարժման մեջ է մտնում 19-րդ դարի իննսունական թվականներին, երբ նա սովորում էր Կիևի համալսարանում։ Ուսանողական ռևոլյուցիոն ելույթներին ակտիվորեն մասնակցելու համար նա 1902 թվականին վտարվում է համալսարանից։

Չնայած դրան՝ ցարիզմի հալածանքները չընկճեցին ընդունակ ու համարձակ Ամիրյանին։ Նա ծավալում է քաղաքական-հասարակական գործունեություն, որի ուղին, սակայն, եղել է բավական բարդ։ Սկզբնական շրջանում Ամիրյանը նույնիսկ հարել է դաշնակցությանը՝ խաբվելով նրա «դեմոկրատական», «ռևոլյուցիոն» կեղծ ֆրազներով։ Բայց ահա մաքառումների միջոցով նա հաղթահարում է իր այդ մոլորությունը, պայքար մղում դաշնակցության դեմ և 1910 թվականին զինվորագրվում է Լենինի ստեղծած ու ղեկավարած Կոմունիստական պարտիային, դառնում նրա հավատարիմ մարտիկներից ու գործիչներից մեկը։

Ամիրյանը հիմնականում աշխատել է Անդրկովկասում և հատկապես Բաքվում։ Նրա վրա խոր ու կենարար ազդեցություն է թողել Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտ ու մերձավորագույն զինակից Ստեփան Շահումյանը, որը բարձր է գնահատել Ամիրյանի ընդունակությունները։ Ամիրյանի պարտիական-քաղաքական աշխատանքում կենտրոնական տեղ է բռնում նրա ժուռնալիստական-հրապարակախոսական գործունեությունը։ Նա ակտիվորեն աշխատակցել է բոլշևիկյան մամուլին, հանդես եկել մի շարք գրքերով ու բազմաթիվ հոդվածներով, որոնց մեջ քննարկել ու վերլուծել է հասարակական կյանքի կարևորագույն հարցեր։

Բնորոշ է, որ Ա. Ամիրյանի ռևոլյուցիոն աշխարհայացքի բյուրեղացումը սկսվում է նրա անհաշտ պայքարով նացիոնալիզմի դեմ։ Դա հատկապես ցայ-

տուն կերպով արտահայտվում է ռուսական առաջին ռևոլյուցիայի ժամանակից, երբ մի կողմից՝ բանվորական շարժման հզոր ալիքները և մյուս կողմից բոլշևիկների եռանդուն գործունեությունն իրենց խորն ու բարերար ազդեցությունն են ունենում նրա վրա։ Ա. Ամիրյանը մոտիկից ծանոթանում է մարքսիստական գրականությանը և ուսումնասիրում այն։

Ընդհանուր ռևոլյուցիոն իրադրության պայմաններում գնալով կազմալուծվում է դաշնակցության պարտիան։ Արդեն 1906 թվականին նրանից անջատվում են «երիտասարդ դաշնակցականները», որոնց աչքի ընկնող ներկայացուցիչներից էր Ա. Ամիրյանը։ Բոլշևիկները, Ստ. Շահումյանը ողջունեցին այդ պառակտումը, միաժամանակ նշելով, որ պետք է այն մինչև վերջը հասցնել։ Ա. Ամիրյանը կանգնեց հենց այդ դիրքի վրա։

Դեռ 1906 թվականին «Մրավյան» ծածկանունով լույս է տեսնում Ա. Ամիրյանի «Ժամանակն է սթափվելու» բրոշյուր-դիմումը։ Այնտեղ պարզորեն ուրվագծվում է Ամիրյանի գործունեության հետագա ուղին և նրա ժուռնալիստական-հրապարակախոսական խոստումնալի բարձր ձիրքը։

Նա ցույց է տալիս, որ ինչպես բոլոր երկրների շահագործողներին, այնպես էլ հայկական բուրժուազիային հետաքրքրում էր ոչ թե աշխատավոր ժողովրդի ազատագրումը, այլ նրան տիրապետելն ու ճնշելը։ Միանգամայն արդարացի էր Ամիրյանը, երբ ասում էր, թե «բուրժուաների սերը դեպի ժողովուրդը — գա տիրոջ սերն է դեպի իր կթան կովը»[1]։

Ինչպիսին հայկական բուրժուազիան է, այնպիսին էլ նրա հարազատ զավակ դաշնակցությունը։ Ամիրյանը մերկացնում է դաշնակցության «ժողովրդասեր լինելու» կեղծ տակտիկան և ցույց է տալիս, որ այդ բուրժուա-նացիոնալիստական պարտիան դեմագոգիկ կերպով դիմում է զանազան դեմոկրատական ֆրազների, որպեսզի իր կողմը գրավի աշխատավոր մասսաներին և անխնայարար ծծի նրանց արյունը։

Ամիրյանի արտահայտությամբ դաշնակցությունը հայ իրականության մեջ դարձել էր «լոկ մի կառավարություն»՝ իր միլիտարիզմով, հարկահանության սիստեմով, դատավարությամբ և այլն։

Ամիրյանը մերկացնելով դաշնակցականների քարոզած «ազգի համերաշխության» բուրժուա-նացիոնալիստական կեղծ թեորիան, առաջ է քաշում դասակարգային պայքարի տեսակետը։ Նա նշում է, որ աշխատավորության ազատագրման համար պետք է կռվել բոլոր շահագործողների, այդ թվում նաև հայկական բուրժուազիայի դեմ. «Պետք է կռվել հայ բուրժուազիայի դեմ։ Իսկ կռվել բուրժուազիայի դեմ՝ ներկա պայմաններում, կարելի է միայն մի ճանապարհով՝ այն է, որ ցույց է տվել Մարքսը»[2]։ Ամիրյանը հմտորեն օգտագործում է դասակարգային պայքարի մարքսյան թեորիան ընդդեմ դաշնակցության։

Չնայած Ամիրյանի «Ժամանակն է սթափվելու» բրոշյուրը զերծ չէ սխալներից ու թերություններից (հատկապես պետք է նշել այն, որ այստեղ Ամիրյանը դեռևս պատրանքներ ունի դաշնակցության բարենորոգման մասին), այնուամենայնիվ այն վկայում է, որ նրա հեղինակը կանգնած է դեպի սոցիալիզմն արմատական շրջադարձ կատարելու նախադռանը։

[1] Մրավյան (Հրանտ Ամիրյան), Ժամանակն է սթափվելու, 1906, էջ 17։
[2] Նույն տեղում, էջ 9։

Անհրաժեշտ է միաժամանակ ընդգծել «Ժամանակն է սթափվելու» աշխատության նշանակությունը որպես ժուռնալիստական-հրապարակախոսական կարևորագույն երկի, մարտական պամֆլետի։ Այստեղ ակնառու կերպով դրսևորվեց Ամիրյանի գրական ընդունակությունների ուժն ու ծավալը և լուրջ ընդհանրացումներ կատարելու կարողությունը։

1907 թվականին լույս տեսավ Ա. Ամիրյանի «Դաշնակցության կրիզիսը» նոր աշխատությունը, որի մեջ նա մարտնչող ժուռնալիստի կրքոտությամբ նորից մերկացնում է դաշնակցության բուրժուա-նացիոնալիստական էությունը, խարազանում այդ բռնակալական պարտիայի ռեակցիոն գործունեությունը։

Ամիրյանը մերկացնում է բուրժուական, շահագործողական կարգերը և ընդգծում, որ աշխատավոր ժողովրդի փրկությունը միայն ու միայն կապիտալիստական կարգերի տապալման և սոցիալիզմի հաղթանակի մեջ է[1]։ Ահա այն ուղին, որի վրա կանգնում է Ամիրյանը և նույնը կոչ անում բանվորներին։

Ամիրյանը մեծ ուժով ընդգծում է ռուսական ռևոլյուցիայի ազատարար նշանակությունը հայ ժողովրդի համար և նրան կողմնորոշում դեպի ռևոլյուցիոն Ռուսաստան, դեպի ցարիզմի դեմ մղվող համաժողովրդական պայքարը։ Նա՝ դիմելով հայ ժողովրդին և հատկապես դաշնակցության ազդեցության տակ գտնվող խավերին, գրում է. «Եթե դուք ձգտում եք ազատության, ապա կտրեցեք ձեր կապը հավիտենապես դավաճան բուրժուազիայի հետ, կտրեցեք ձեր կապը դաշնակցության բյուրոկրատիայի հետ, կտրեցեք ձեր կապը ժողովրդի բոլոր թշնամիների հետ և միացած Ռուսաստանի բոլոր ազատասեր ժողովուրդների հետ, նետվեցեք Ռուսաստանի մեծ հեղափոխության գոռ հորձանքների մեջ, որտեղ կգտնեք դուք ազատություն ձեր դժբախտ երկրի»[2]։

«Դաշնակցության կրիզիսը» բրոշյուրն ամբողջությամբ վերցրած մի մարտակոչ է՝ ուղղված դաշնակցության դեմ։ Պետք է նշել, որ նրա մեջ էլ դեռևս կան թերություններ և նույնիսկ սխալներ, բայց հիմնականում Ամիրյանը ճիշտ է բնութագրում դաշնակցության ու հայկական բուրժուազիայի ռեակցիոն դերը և մասսաներին նպատակադրում դեպի համառուսական ռևոլյուցիան։ Դա Ամիրյանի շրջադարձն էր դաշնակցություն կոնտրռևոլյուցիոն պարտիայից։

Ահա թե ինչու Ամիրյանի մարտական քննադատությունը և խարազանող խոսքը իսկական վայնասուն առաջ բերին բուրժուական շրջաններում և հատկապես դաշնակցականների շարքերում։ Իրենք՝ դաշնակցականները հարկադրված էին խոստովանելու, որ Արսեն Ամիրյանը իրենց թշնամին է և վճռական պայքար է մղում իրենց դեմ։

Ստոլիպինյան դաժան ռեակցիայի տարիներին Ամիրյանը ոչ միայն չվհատվեց, այլև շարունակեց խիզախաբար մարտնչել։

Ամիրյանի այս ժամանակաշրջանի ժուռնալիստական գործունեությունից հատկապես պետք է նշել նրա «Թյուրքիայի հեղափոխությունը» աշխատությունը, որը լույս տեսավ 1909 թվականին։ Այդ բրոշյուրը աչքի է ընկնում սոցիալական բարդ երևույթների ճիշտ ըմբռնությամբ ու գնահատությամբ։ Հատկապես կարևոր էր 1908 թվականի թուրքական բուրժուական ռևոլյուցիայի գնահատման հարցը։

---

[1] Մուավյան. Դաշնակցության կրիզիսը, 1907, էջ 3։
[2] Նույն տեղում, էջ 49։

Ռուսական ռևոլյուցիայի ազդեցության տակ է բորբոքվել թուրքական ռևոլյուցիան, բայց նա մնացել է սահմանափակ։ Այստեղ արտահայտվել է Թուրքիայի ընդհանուր հետամնացությունը։

Ամիրյանը նշում է, որ թուրքական բուրժուազիան, նրանց գաղափարախոսները՝ «երիտասարդ թուրքերը» ֆեոդալիզմի դեմ պայքարելով հանդերձ ձգտում էին ընդհանուր լեզու գտնել սուլթան Աբդուլ-Համիդի հետ, որպեսզի մի պոչատ կոնստիտուցիայով հարցը լուծեն և մասնակից դառնան իշխանությանը։ «Երիտասարդ թուրքերը» երբեք էլ չեն մտածել արմատական փոփոխությունների, հասարակական կյանքի լուրջ հեղաբեկման մասին. «Պատմության մեջ հազիվ թե եղած լինի մի այնպիսի խաղաղ հեղափոխություն, ինչպիսին է թյուրքականը, և այնպիսի «խոհեմ» հեղափոխականներ, ինչպիսին են երիտասարդ թյուրքերը»[1]։

Ավելին, «երիտասարդ թուրքերը» հազիվ էին իշխանության գլուխ անցել, երբ նրանք իրենց դրսևորեցին որպես իսկական բռնակալներ, ժողովրդի դահիճներ։ Դա արտահայտվեց ինչպես թուրք աշխատավորության, այնպես էլ հատկապես Թուրքիայում բնակվող հայ ժողովրդի նկատմամբ։

«Թյուրքիայի հեղափոխությունը» աշխատությունը ցույց է տալիս, որ Ամիրյանի դեմոկրատական-ռևոլյուցիոն աշխարհայացքը, որը կազմավորվում էր մարքսիստական դրականության ուսումնասիրության, ռևոլյուցիոն շարժումների ազդեցության և կոնտրռևոլյուցիոն պարտիաների մերկացման հիման վրա, իրեն համար ճանապարհ էր հարթում դեպի պրոլետարական պարտիան։ Եվ ահա, երկարատև մաքառումներից ու անխոնջ պայքարից հետո նրան տեսնում ենք այդ պարտիայի մեջ։

Ամիրյանի մարքսիստական համոզմունքների ու ռևոլյուցիոն հաստատակամության մասին է վկայում այն կարևոր փաստը, որ նա հենց ստոլիպինյան ռեակցիայի ծանր ժամանակաշրջանում, երբ անկումայնությունն ընդգրկեց նույնիսկ պարտիական ինտելիգենցիայի մի մասին, լիակատար շրջադարձ կատարեց դեպի բոլշևիզմը և անդառնալիորեն իր կյանքը նվիրեց պրոլետարիատի ու աշխատավոր մասսաների ազատագրման մեծ գործին, Կոմունիստական պարտիայի գործին։

II

Բոլշևիկ Արսեն Ամիրյանը եռանդուն պարտիական-քաղաքական գործունեություն ծավալեց ռևոլյուցիոն շարժման նոր վերելքի տարիներին։ Ապա նրա ժուռնալիստական-հրապարակախոսական աշխատանքը հզոր թափ ստացավ մի այնպիսի բարդ ու դժվարին ժամանակաշրջանում, ինչպիսին էր առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմը։ Ամիրյանը զինված պատերազմի, խաղաղության և ռևոլյուցիայի լենինյան թեորիայով ու տակտիկայով համարձակորեն և մեծ հմտությամբ պրոպագանդում էր բոլշևիկյան լոզունգները և պայքարում դրանց կենսագործման համար։

Պատերազմի ժամանակաշրջանում կարևոր նշանակություն ուներ գրավոր պրոպագանդան։ Եվ ահա 1915 թվականի դեկտեմբերից Թիֆլիսում սկսում է լույս տեսնել «Պայքար» սոցիալ-դեմոկրատական թերթը, որին ամենաակտիվ մասնակցություն ցույց տվեց Արսեն Ամիրյանը։ Նա «Ամիրան» ստորագրու-

[1] Մռավյան. Թյուրքիայի հեղափոխությունը, 1909, էջ 3։

թյամբ գրեց բազմաթիվ հոդվածներ, որոնց մեջ բարձրացնում էր հասարակական կյանքի այրող հարցեր և դրանց տալիս մարքսիստական վերլուծություն։ Նա, որպես մարքսիստ ժուռնալիստ, իր մարտնչող հոդվածներում մերկացնում է պատերազմի թալանչիական բնույթը, պրոպագանդում պատերազմի ժամանակաշրջանի բոլշևիկյան լոզունգները, իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու լենինյան տակտիկան։

Ամիրյանը մատնանշում է, որ արդի պատերազմն իմպերիալիզմի ծնունդն է, և հետևանքը վերացնելու համար պետք է լիկվիդացնել պատճառը։ Պատերազմի թալանչիական էությունը բացահայտելու համար լեգալ թերթի շրջանակներում Ամիրյանը դիմում է ժուռնալիստական հետաքրքիր պրիոմների։ Հայտնի է, որ պատերազմող պետություններից յուրաքանչյուրն ագրեսիվ քաղաքականություն վարելով հանդերձ իրեն ձևացնում է արդարացի կողմ, իսկ հակառակորդին անարդարացի։ Այդպես նրանք սկսում են իրար հայհոյել ու մերկացնել։ Ամիրյանն օգտագործում է այդ հանգամանքը և հենց բուրժուական թերթերից կատարած մեջբերումներով, մերկացնում միջազգային իմպերիալիզմը, նրա նյութած պատերազմի զավթողական բնույթը։

Ամիրյանը ցույց է տալիս, որ հակառակ բուրժուազիայի կամքին ու ձգտումներին՝ պատերազմն ավելի է սրում կապիտալիզմի հակասությունները և արագացնում նրա կործանումը. «Ներկա դասակարգային հասարակությունը հասել է արդեն իր զարգացման գագաթնակետին, հասել է մի դրության, երբ արդեն գոյություն ունեն օբյեկտիվ նախապայմաններ մարդկային հասարակության արմատական վերակազմության»[1]։

Պատերազմն ուժգին թափով բորբոքելու համար իմպերիալիստները լայնորեն օգտագործեցին բոլոր հնարավոր միջոցները, այդ թվում նաև նացիոնալիզմի թունոտ զենքը, որի օգնությամբ ժողովուրդներին գրգռում էին միմյանց դեմ և կազմակերպում մարդկային ահավոր սպանդ։

Այդպիսի պայմաններում առաջնակարգ նշանակություն ստացավ պայքարը բուրժուական նացիոնալիզմի դեմ, շովինիզմի վարակի դեմ։

Բոլշևիկների պարտիան Վ. Ի. Լենինի գլխավորությամբ հետևողականորեն անցկացրեց պրոլետարական ինտերնացիոնալիզմի գիծը և վճռական հարվածներ հասցրեց նացիոնալիզմին։ Անդրկովկասի բոլշևիկների շարքերում և հատկապես հայ իրականության մեջ բուրժուական նացիոնալիզմի սպանիչ մերկացմամբ հանդես եկավ նաև Արսեն Ամիրյանը։ Նրա երկարաշունչ ու մարտական հոդվածները, որոնք հրապարակվեցին «Պայքար»-ում, գրված էին աննկուն ռևոլյուցիոնների կրքոտությամբ ու մահացու ատելությամբ դեպի նացիոնալիստները։

«Ազգային թե դասակարգային բաղաքականություն» հոդվածում Ամիրյանն անողոքաբար մերկացնում է հայկական բուրժուազիայի, դաշնակցության ու բուրժուական մեշչանական ինտելիգենցիայի նացիոնալիստական ու ավանտյուրիստական գործունեությունը։ Նա ցույց է տալիս, որ կապիտալիստական խոշոր պետությունները ձգտում են համաշխարհային տիրապետության և այդ հանապարհին նրանք պատրաստ են կուլ տալու թույլ պետություններին ու փոքր ժողովուրդներին։ Նրանք կազմել էին նաև հայ ժողովրդի բնաջնջման պլան։ Իմպերիալիստական գիշատիչների ձեռքին «հայկական հարցը» եղել է մի դուռ,

[1] «Պայքար», № 41, 1916, հոկտեմբերի 9։

որը միշտ բաց են պահել «Տաճկաստանից արտոնություններ գցելու համար». Նրանք երբեք շահագրգռված չեն եղել այդ հարցի լուծմամբ։

Չնայած այդ ակնհայտ ճշմարտությանը և դառն փաստերին, հայկական բուրժուազիան շարունակ խունկ է ծխել արևմտյան պետությունների առաջ։ Այդ առթիվ Ամիրյանը գրում է. «Դիպլոմատիան բարեհորդումներ էր պահանջում հայերի համար և որպես հետևանք պետությունները ստանում էին նորանոր կոնցեսիաներ, իսկ հայերը նորանոր կոտորածներ։ Եվ որքան շատ էին կոտորում Տաճկաստանի անմեղ ժողովրդին, այնքան մեր «համազգային» քաղաքագետները ավելի էին փարվում դիպլոմատիայի ոտքերին, որքան շատ անմեղ արյուն էր թափվում, այնքան նրանք ավելի ամրացած էին համարում հայկական «դատը»[1]։

Ամիրյանը մատնանշում է, որ բուրժուական նացիոնալիզմի դեմ պետք է սիստեմատիկ ու հետևողական պայքար մղել և երբեք չընկնել բարեհոգության մեջ։ Այդ տեսակետից բնորոշ է նրա «Չընկնենք իլյուզիաների մեջ» հոդվածը, որտեղ Ամիրյանը քննադատում է մենշևիկ Իվ. Պիճիկյանին՝ նրա դեպի դաշնակցությունն ունեցած հաշտվողականության ու բարեհոգության համար։

Ամիրյանը ցույց է տալիս, որ գնալով ավելի ու ավելի է երևում դաշնակցականների ոտքի տակի հողը և մասսաները երես են դարձնում նրանցից։ Բայց դա չի կարող պատրանքներ ստեղծել մեզ համար, որովհետև դաշնակցությունը իր հետևից տանում է աշխատավորների հետամնաց խավերին։ Այստեղից էլ հայ ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի խնդիրն է, ոչ միայն կռիվ հայտարարել ցարիզմին ու բուրժուազիային, մերկացնել դաշնակցականներին, այլև գիտակցության բերել հայ անդիտակից դեմոկրատիային, ահա ինչով մենք պետք է կռվենք Դ-յան դեմ»[2]։

Ամիրյանը այդ շրջանում վճռական պայքար է մղել նաև այլ մանր-բուրժուական հոսանքների դեմ։ «Սպեցիֆիկները» հավակնում էին հայ բանվորության միակ ներկայացուցիչը լինել և ամեն մի հարց լուծել ազգայնականության ոգով։ Իրականում «սպեցիֆիկները» իրենց հետևում չունեին և ոչ մի աշխատավորական մասսա։ Նրանք՝ այդ առանց բանակի տխրահռչակ դենքրալները ծվարել էին բուրժուազիայի փեշերի տակ և ձգտում էին ստրկական հողի պատվաստել ժողովրդի մեջ։ Դրանով հանդերձ նրանք փորձում էին մարքսիստ ձևանալ, որպեսզի շահագործեն այդ վսեմ անունը։ Բոլշևիկներն անողոքաբար մերկացրել են այդ փարիսեցիությունը և վճռական պայքար մղել «սպեցիֆիկների» դեմ։

«Մեր մարքսիստանմանները» ծավալուն հոդվածում Ամիրյանը խարազանում էր «սպեցիֆիկներին»։ Այդ նացիոնալ-սոցիալիստներին (Բ. Իշխանյան, Դավիթ Անանուն և ուրիշները) Ամիրյանն անվանում է «հայ մարքսիստանմաններ» և նրանց համեմատում ռուսական «լեդայ մարքսիստների» հետ (Ստրուվե, Տուգան-Բարանովսկի, Բուլգակով և այլն), որոնք փորձում էին մարքսիզմը հարմարեցնել բուրժուազիայի շահերին. «Հետևելով մեր մարքսիստանմանների դրույթներին, չի կարելի չնկատել, որ նրանք մի առանձին բավականությամբ ձգտում են «մարքսիստորեն» արդարացնել և արդարացնել հատկապես բուրժուական հասարակական հարաբերությունները»։ Այդպես Բ. Իշխանյանը իր

[1] «Գայթար», № 24, 1910, հունիսի 13։
[2] «Գայթար», № 40, 1910, հոկտեմբերի 1։

գրքույկներում զբաղված է հատկապես հայ բուրժուազիայի փառաբանությամբ և նրա ամեն մի քայլի պատմական արդարացումով։ Նույն ոգով է գործում նաև Դ. Անանունը, որը «շուտով կլինի ավելի առաքելական, քան ինքը Առաքելյանը»[1]։ Նա քարոզում է բուրժուազիայի հավիտենական իշխանություն։

Ամիրյանը նշում է, որ մարքսիզմի համար խիստ վտանգավոր են նրա քողարկված թշնամիները, ուստի, պետք է անխնա մերկացնել ու ջախջախել նրանց, տվյալ դեպքում «սպեցիֆիկներին»։ Ամիրյանի հոդվածը վերջանում է հետևյալ տողերով. «Մեր մարքսիստանմանները ձգտում են այսօր միացնել մարքսիզմը մշակականության հետ։ Այդ պարոնների «հնթարկումը» «Մշակ»-ին «անդրադառնում է նրանց համար որպես պատիվ և նյութական փարիամություն»։ Անձնական տեսակետից պ. պ. մարքսիստանմանները իհարկե չափազանց «խելոք» մարդիկ են։ Դրանք հանդիսանում են էնգելսի արտահայտությամբ «էժան մատերիալիզմի շրջիկները», մատերիալիստական վեհ ուսմունքի կեղծողները։ Չարժե ափսոսալ նրանց, բայց մերկացնել նրանց անհրաժեշտ է»[2]։ Ամիրյանը բոլշևիկյան պարտիայի այն անվեհեր մարտիկներից մեկն էր, որ վճռական ու անհաշտ պայքար էր մղում «սպեցիֆիզմի» դեմ։

Ամիրյանը իր հոդվածներով մերկացնում է հայ իրականության մթնոլորտը թունավորող բուրժուական բոլոր նացիոնալիստներին։

Բուրժուական նացիոնալիզմին հակադրելով պրոլետարական ինտերնացիոնալիզմը, Ամիրյանը խարազանում է հայ իշխող դասերի այլանդակ բարքերը։

Ամիրյանը հանդես է գալիս որպես պրոլետարական ինտերնացիոնալիզմի անվեհեր պրոպագանդիստ և նպաստում է անդրկովկասյան ժողովուրդների եղբայրական համերաշխության ամրապնդման գործին։ Նա ռևոլյուցիոն գործչի իր ողջ ընդունակությունները և ժուռնալիստական տաղանդը ի սպաս էր դրել աշխատավոր մասսաների ազատագրման մեծ գործին։

III

1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի լուրը Ամիրյանն ստանում է Բաքվում։ Անդրկովկասի բոլշևիկների հիմնական նպատակն էր պայքար մղել բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիան սոցիալիստական ռևոլյուցիայի վերաճելու լենինյան պլանի կենսագործման համար։ Երկրամասի բոլշևիկների գործունեությունն անմիջականորեն ղեկավարում էր մեր պարտիայի ականավոր գործիչ Ստեփան Շահումյանը։ Նրա հետ միասին Անդրկովկասում խոշոր դեր էին կատարում Պ. Ջափարիձեն, Մ. Ազիզբեկովը, Ի. Ֆիոլետովը, Ա. Միկոյանը և ուրիշները։ Բաքվի բոլշևիկյան ղեկավար խմբի մեջ էր մտնում նաև անվեհեր ռևոլյուցիոներ Արսեն Ամիրյանը։

Մարտիկ-ժուռնալիստ Ամիրյանի ամբիոնն ամենից առաջ մամուլն էր, տպագրական խոսքը։ 1917—18 թվականների ռևոլյուցիոն գոռ մարտերում և հատկապես Բաքվի կոմունայի ժամանակ տառացիորեն փթթում էր Ամիրյանի տաղանդը։ Պետք է ընդգծել, որ Ստ. Շահումյանը և Բաքվի բոլշևիկյան կոմիտեն ամբողջությամբ մեծ վստահություն ունեին դեպի Ամիրյանի ուժերը և հատկա-

[1] Այստեղ Ամիրյանը նկատի ունի լիբերալ բուրժուական «Մշակ» թերթի խմբագիր Հ. Առաքելյանին։ Մանոթ. Մ. Ա.։

[2] «Պայքար», № 39, 1916, սեպտեմբերի 25։

պես նրա գրական-հրապարակախոսական ընդունակությունները։ Միայն դրանով կարելի է բացատրել այն փաստը, որ Ստ. Շահումյանին 1917 թ. հոկտեմբերին «Բակինսկի բաբոչի» թերթի խմբագրի մարտական պոստում փոխարինեց Արսեն Ամիրյանը, որը մինչ այդ ակտիվորեն աշխատակցում էր թերթին։

Ակնհայտ է, որ «Բակինսկի բաբոչի»-ն որպես Բաքվի բոլշևիկյան կոմիտեի օրգան, այնուհետև էլ մնաց Ստ. Շահումյանի ընդհանուր ղեկավարության տակ, բայց պարտիական-քաղաքական, իդեոլոգիական աշխատանքի մի այդպիսի կարևոր բնագավառ, Բաքվի կոմիտեի հանձնարարությամբ անմիջականորեն վարում էր անձնվեր կոմունիստ ու մարտնչող մարքսիստ Արսեն Ամիրյանը, որպես թերթի խմբագիր։

Այդ պատվավոր ու պատասխանատու աշխատանքում Ամիրյանը հանդես եկավ իր գիտելիքների ու ընդունակությունների ողջ սպառազինությամբ։ Նա գրում էր պարզ ու հստակ լեզվով, միանգամայն մատչելի ոճով և դրա հետ մեկտեղ մարքսիստական խորաթափանցությամբ ու ռևոլյուցիոն կրքոտությամբ։ Նա «Բակինսկի բաբոչի»-ն վարում էր բոլշևիկյան անհաշտելիության ոգով։ Ամիրյանի ամեն մի հոդվածը ոչ թե սոսկ խոսում, այլ ուղղակի կրակում էր պրոլետարիատի թշնամիների վրա։ «Բակինսկի բաբոչի» թերթում տպագրված Ամիրյանի հոդվածները մեծ մասամբ առաջնորդողներ էին և արծարծում էին ծրագրային հարցեր։ Նա միաժամանակ աշխատակցել է բոլշևիկյան «Բանվորի խոսք», «Տեղեկատու» և այլ թերթերին, որոնց էջերում խոսում էր ժամանակի ակտուալ խնդիրների մասին։ Ցուցաբերելով անհուն եռանդ, անհողդողդ կամք ու մեծ ընդունակություններ, Ամիրյանը իր ողջ գործունեությամբ մոբիլիզացնում էր աշխատավոր մասսաներին՝ ժամանակի կենսական հարցերի լուծման համար։ Նա դարձավ Բաքվի պրոլետարիատի սիրելի ու հարազատ գործիչներից մեկը։

«Բակինսկի բաբոչի» թերթը կանգնած էր սոցիալիստական ռևոլյուցիայի դիրքերում և վճռական պայքար էր մղում տապալված դասակարգերի ու նրանց ծախու իդեոլոգների դեմ։ Այդ ուղղությամբ Արսեն Ամիրյանը հանդես եկավ մի շարք մարտական հոդվածներով, որոնց մեջ լուսաբանում էր Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի համաշխարհային պատմական նշանակությունը և անողոքաբար մերկացնում բանվոր դասակարգի ու աշխատավոր գյուղացիության թշնամիներին։

«Ինտելիգենցիայի մասին» մեծածավալ հոդվածում Ամիրյանը ցույց է տալիս, որ ցարական ու բուրժուական կարգերի խորտակումը ողբում են ոչ միայն կալվածատերերն ու կապիտալիստները, նախկին ունևոր դասակարգերը, այլև նրանց մսից ու արյունից ստեղծված ինտելիգենցիան։

Ամիրյանը նշում էր, որ սովետական կարգեր հաստատելուց հետո պետք է սիստեմատիկաբար ամրապնդել այն, իսկ դրա գլխավոր նախապայմաններից մեկը անհաշտ պայքարն է տապալված դասակարգերի լիկվիդացման համար։ Նա ընդգծում էր, որ «կալվածատերերն ու կապիտալիստները վերջիվերջո հարազատ եղբայրներ են այն ահավոր թշնամու առաջ, որի անունն է բանվոր դասակարգ»[1]։ Այստեղից էլ այն մահացու սարսափը, որ նրանք ունեն Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի, Սովետական պետության և նրա ղեկավար մեծ Լենինի հանդեպ։

[1] «Բակինսկի բաբոչի», № 7, 1918, հունվարի 21։

Եթե Հոկտեմբերյան ռևոլյուցիան մի կողմից կատաղեցրեց բոլոր երկրների շահագործողներին, ապա մյուս կողմից նա բարերար ազդեցություն ունեցավ ամբողջ աշխարհի աշխատավորության վրա. վերջինս ռուսական օրինակով ոտքի է կանգնում և պայքար մղում շահագործողական կարգերի դեմ։ «Բանվորական ռևոլյուցիան Արևմուտքում» առաջնորդող հոդվածում Ամիրյանը ցույց է տալիս, թե ինչպես ազատարար Հոկտեմբերի ազդեցության տակ ռևոլյուցիոն շարժումները մեծ թափ են ստացել Ֆրանսիայում, Անգլիայում, Ավստրո-Հունգարիայում, Գերմանիայում, Ֆինլանդիայում և այլն։ Այդ նշանակում է, որ ընդհանուր առմամբ ռևոլյուցիան ծավալվում է խորությամբ ու լայնությամբ և ոչ ոք ի վիճակի չէ կասեցնելու այդ առաջընթացը։

* * *

Ամիրյանի բազմաթիվ հոդվածներ նվիրված են անդրկովկասյան իրականությանը։ Նա անխնայորեն մերկացնում է ռևոլյուցիայից հետո երկրամասում ստեղծված կոնտրռևոլյուցիոն Անդրկովկասյան Կոմիսարիատի և ապա Սեյմի հակաժողովրդական քաղաքականությունը։ Զբաղվելով Կովկասի ժողովուրդների վաճառքով և կատարելով գերմանական ու թուրքական իմպերիալիստների կամքը, Սեյմը 1918 թ. ապրիլի 9-ին հռչակեց Անդրկովկասի «անկախություն», որը նշանակում էր երկրամասի անջատում Սովետական Ռուսաստանից և նրա հանձնում օտարերկրյա իմպերիալիստների հոշոտմանը։ Ամիրյանը ցույց է տալիս, որ Անդրկովկասի այդ տխրահռչակ «ինքնուրույնությունը կլինի կովկասյան ժողովուրդների գլխապտույտ կործանման սկիզբ»[1]։

Ամիրյանն անդուլ կերպով պրոպագանդել է այն գաղափարը, որ Կովկասի ժողովուրդների փրկությունն ու ազատությունը կապված է Սովետական Ռուսաստանի հետ։ Ուստի պետք է ամեն կերպ օգնել երիտասարդ Սովետական պետության ամրապնդմանը։ Ամիրյանը անարգանքի սյունին է գամում անդրկովկասյան նացիոնալիստներին, որոնք ոչ միայն գործարքի մեջ մտան օտարերկրյա իմպերիալիստների հետ, այլև ամեն քայլափոխում փորձում էին վնաս հասցնել Սովետական Ռուսաստանին։ Նրանց ստոր դավադրության հետևանքով 1918 թ. հունվարին Շամխոր կայարանի մոտ կազմակերպվեց կովկասյան ռազմաճակատից տուն վերադարձող ռուս զինվորների ահավոր կոտորած։

Ամիրյանը հանդես է գալիս մի շարք մերկացնող հոդվածներով («Պաշտպանողականները Ելիզավետպոլի դեպքերի մասին», «Բացել սև խաղաթղթերը», «Ելիզավետպոլի դեպքերը և հայ նացիոնալիստների քաղաքականությունը», «Պրովակացիոն գրականություն» և այլն), որոնց մեջ նա բացահայտում է այդ կոշմարային ոճրագործության հանցավորների հրեշային կերպարանքը։ Շամխորի կոտորածը Ամիրյանն անվանում է գիշերային ավազակների հարձակում, դավաճանական դնդակ՝ արձակված թիկունքից։

Արսեն Ամիրյանը իր ողջ եռանդն ու ընդունակությունները նվիրել էր Սովետական իշխանության հաղթանակի ու ամրապնդման գործին։

---

[1] «Բակինսկի բանչի», № 47, 1919։

1918 թ. մարտյան քաղաքացիական կռիվներում տարած հաղթանակից հետո Բաքվի Սովետը դարձավ քաղաքի լիիշխան տերը և լայնորեն ծավալեց իր գործունեությունը։ 1918 թ. ապրիլի 25-ին կազմվում է Բաքվի Սովետական կառավարությունը՝ Ժողովրդական Կոմիսարների Սովետը՝ Ստ. Շահումյանի գլխավորությամբ։

«Բակինսկի բարոչի»-ն Բաքվի ինտերնացիոնալ պրոլետարիատի մարտական թերթը անմիջապես բացահայտում է այդ խոշորագույն իրադարձության պատմական նշանակությունը և աղդարարում, որ Բաքվի Ժողկոմսովետը հետևելով Սովետական Ռուսաստանի Կենտրոնական կառավարության օրինակին, կիրականացնի բանվորա-գյուղացիական քաղաքականություն։

Ամիրյանը «Միատարր իշխանության հարցի մասին» հոդվածում մեծ խորաթափանցությամբ դրում է, որ Բաքվի նորաստեղծ Սովետական կառավարության գործունեության հաջողության դրավականը նրա պրոլետարական, դեմոկրատական կազմի մեջ է։

Բաքվի Ժողկոմսովետն անմիջապես ձեռնամուխ եղավ սոցիալիստական միջոցառումների կենսագործման, առանց որի Սովետական իշխանությունը կլիներ բովանդակազուրկ։ Դեռ 1918 թ. ապրիլի 23-ին «Բակինսկի բարոչի» թերթի № 72-ում տպագրվեց Ամիրյանի «Դեպի հաղթանակներ» հոդվածը, որտեղ ցույց է տրվում, թե ինչպես սովետական մարդն իր բարոյա-քաղաքական մակարդակով, ռևոլյուցիոն կամքով, հոգու արիությամբ շատ բարձր է կանգնած բուրժուական ամեն մի քաղքենուց։ Բայց թշնամուն մինչև վերջը հաղթելու համար բացի քաղաքական իշխանություն նվաճելուց, պետք է նաև կենսագործել Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հռչակած սոցիալ-տնտեսական միջոցառումները. «Ռևոլյուցիան կարող է հաղթանակել միայն ռևոլյուցիոն պրակտիկայով»,— ընդգծում էր Ա. Ամիրյանը։

Բաքվի Սովետական կառավարությունը հատուկ ուշադրություն դարձրեց ազգային հարցին։ Բոլոր ազգությունների համար ապահովվում էր իրավահավասարությունը և նրանց ակտիվ մասնակցությունը երկրի քաղաքական, տնտեսական ու կուլտուրական կյանքին։ Սովետական իշխանության օրինակով Ամիրյանը ցույց էր տալիս, որ «ազգային ճնշումը վերացվում է միայն սոցիալիստական կարգերում»։

Բաքվում Սովետական իշխանության հաղթանակը և նորաստեղծ կառավարության եռանդուն գործունեությունը կատաղությամբ ընդունեցին Անդրկովկասի ներքին կոնտրռևոլյուցիոն ուժերը և օտարերկրյա իմպերիալիստները։ Նրանք միավորվեցին, որպեսզի լիկվիդացնեն Բաքվի կոմունան և արյան մեջ խեղդեն ժողովրդական մասսաների ռևոլյուցիոն վերելքը։

«Վճռական ճակատամարտից առաջ» հոդվածում Ամիրյանը նկարագրելով թուրքական ենիչերիների ավերիչ արշավանքը, ընդգծում է, որ ստեղծելով ռևոլյուցիոն ուժերի ամուր բոունցք, պետք է վճռական հարձակմամբ հետ մղել թշնամուն. «Մենք պետք է պաշտպանվենք հարձակմամբ... Հարձակում ինչ էլ որ լինի։ Բոլորը ի՞ղեն։ Առանց կասկածի և հետ նայելու»[1]։

Բաքվի Ժողկոմսովետի ձեռք առած վճռական միջոցների շնորհիվ ամրապնդվում են Սովետական Զինված Ուժերը և առաջին լուրջ հակահարվածն է

[1] «Բակինսկի բարոչի», № 92, 1918, մայիսի 21։

տրվում հարձակվող թշնամուն։ Բայց վերջինս չի հրաժարվում իր ագրեսիվ նպատակներից և դրանց իրագործման համար նոր ելք է որոնում։

Անդրկովկասը հեշտությամբ նվաճելու և տեղական ժողովուրդներին ստրկացնելու համար գերմանա-թուրքական բռնակալները անց են կացնում «բաժանիր, որ տիրես» խորամանկ ու դավադիր քաղաքականությունը։ 1918 թ. մայիսի 26-ին Անդրկովկասյան Սեյմը ցրվեց և ստեղծվեցին առանձին-առանձին բուրժուա-նացիոնալիստական կառավարություններ Վրաստանում, Ադրբեջանում ու Հայաստանում, Դրանք Լենինի արտահայտությամբ անկախ էին Սովետական պետությունից և լիովին կախված օտարերկրյա իմպերիալիստներից։

Ամիրյանը մեծագույն ուժով է մերկացրել այդ կործանարար քաղաքականությունը։ Իր հոդվածներից մեկում («Պատասխան «Արև»-ին) նա ընդգծում է այն միտքը, որ կովկասյան կոնտրռևոլյուցիան հենվում է վրացական մենշևիզմի, հայկական դաշնակցության և ադրբեջանական մուսավաթիզմի վրա։ Ամիրյանը Կովկասի մասնատումը դիտել է որպես ազգային սատրապությունների ստեղծում և քառակուսի աստիճանի դավաճանություն երկրամասի ժողովուրդների նկատմամբ։ Բուրժուական նացիոնալիստները հոշոտում են ժողովուրդներին, որպեսզի պահպանեն իրենց խղճուկ գոյությունը. «Այդպես ստորանում են միայն մեռնող դասակարգի ներկայացուցիչները».— մեծագույն ատելությամբ գրում է Ամիրյանը։

Ամիրյանը իր մի շարք հոդվածներում («Գերմանիան և Ադրբեջանը», «Գերմանական պրոլետարիատի մասին», «Խայտառակ փաստաթուղթ» և այլն) մերկացնում է օտարերկրյա իմպերիալիստների ագրեսիվ քաղաքականությունը, որի ջատագովներն էին կովկասյան նացիոնալիստները։

Ամիրյանը մատնանշում է, որ Բաքվի պրոլետարիատը պետք է համակվի բարձր գիտակցությամբ և պաշտպանի սև ոսկու քաղաքը՝ «Ռուսաստանի արդյունաբերական գլխավոր ներվը» և այն ժամանակ կփրկվի Բաքուն թե՛ իր համար և թե՛ Ռուսաստանի համար։

1918 թվականի հուլիսի 16-ին կայացավ Բաքվի Սովետի ընդլայնած նիստը, որտեղ Ստեփան Շահումյանը հանդես եկավ զեկուցմամբ Ռուսաստանի և Անդրկովկասի քաղաքական և ռազմական դրության մասին։

Ամիրյանը ղեկավարվելով Ստ. Շահումյանի զեկուցման մեջ առաջադրված ծրագրային դրույթներով, հատուկ հոդված է նվիրում Բաքվի Սովետում անգլիացիների հրավիրման հարցի քննարկմանը և դիմակազերծ անում օտարերկրյա իմպերիալիստներ հրավիրող բուրժուական նացիոնալիստներին, որպես ժողովրդական մասսաների ոխերիմ թշնամիների։

Այնուհետև Ամիրյանը ամբողջ ուժով ընդգծում է այն միտքը, որ մեր փրկությունը պետք է գա հյուսիսից՝ Սովետական Ռուսաստանից և ոչ թե հարավից՝ անգլիական իմպերիալիստներից. «Մեր հայացքներն ուղղված են ոչ թե դեպի հարավ, այլ դեպի մեր հարազատ հյուսիսը, որտեղից մեզ ամեն օր զենության են հասնում զենքով, իսկ վերջին օրերը նաև մարդկանցով»[1]։

---

[1] «Բակինսկի բարոչի», № 141, 1918։

* * *

Սովետական Բաքուն հերոսաբար դիմադրում էր ներքին ու արտաքին թշնամիներին, բայց ուժերն անհավասար էին և գնալով դրությունը բարդանում էր։ 1918 թ. հուլիսի վերջերին Բաքուն շրջապատվեց թշնամիների կրակե օղակով։

«Բակինսկի բարոչի»-ի № 148-ում լույս տեսավ Ամիրյանի վերջին հոդվածը՝ «Ի՞ զեն» վերնագրով։ Այնտեղ ցույց է տրվում, որ այս կրիտիկական մոմենտին պետք է անհապաղ զենքի ուժով դիմել վճռական գոտեմարտի. «Հնչել է ժամը, երբ գործն արդեն չի կարող հապաղում հանդուրժել։ Հնչել է ժամը, երբ բոլոր ազնիվ ռևոլյուցիոներները պետք է անհապաղ դիմեն զենքի՝ պաշտպանելու համար Բաքվի պրոլետարիատի ռևոլյուցիոն պատիվը... Ընկերներ, ու՞մ եք ուզում դուք անձնատուր լինել։ Ոնոր է այդ ասել։ Ի՞ զեն, բոլոր ազնիվ պրոլետարներ»[1]։

Վլադիմիր Իլյիչ Լենինը բարձր գնահատեց Բաքվի բոլշևիկների վարքագիծը։ Նա նշեց, որ Բաքվի մեր ընկերները դատապարտելով ու մերժելով իմպերիալիստների հրավիրման կործանարար քաղաքականությունը «ոչ թե խոսքով, այլ գործով սոցիալիստների համար միակ արժանի քայլն» են կատարել[2]։

Բայց չնայած Բաքվի պրոլետարիատի հերոսական դիմադրությանը, միանդամայն անհավասար մարտում արտաքին ինտերվենցիոն և ներքին կոնտրռևոլյուցիոն ուժերի հարվածների տակ 1918 թ. հուլիսի 31-ին Բաքվի Սովետական իշխանությունը ժամանակավոր պարտություն կրեց։ Օգոստոսի 1-ին կազմվեց «Օենտրոկասպիի դիկտատուրա» կոնտրռևոլյուցիոն կառավարությունը։ Ցրվեց Բաքվի Սովետը և փակվեցին «Բակինսկի բարոչի» ու «Ըզվեստիա» թերթերը։ Ձերբակալեցին Բաքվի պրոլետարիատի ղեկավարներին ու պատասխանատու աշխատողներին։ Դրանց մեջ էին Ստ. Շահումյանը, Պ. Ջափարիձեն, Մ. Ազիզբեկովը, Ի. Ֆիոլետովը, Պ. Ջևինը, Գ. Կորգանովը, Արսեն Ամիրյանը, Ս. Հովսեփյանը, Ի. Մալիգինը, Գ. Պետրովը և ուրիշները։

1918 թվականի սեպտեմբերին անգլո-խսեռական դահիճները Բաքվի 26 կոմունարներին տարան անդրկասպյան ավազուտները և բարբարոսաբար հոշոտեցին նրանց։

Բոլշևիկ Ամիրյանի կյանքն ընդհանրապես և նրա ժուռնալիստական գործունեությունը մասնավորապես ցույց են տալիս, թե ինչպես պետք է պայքարել ու հաղթանակել ժողովրդի համար, նրա ազատ ու երջանիկ կյանքի համար։

Բոլշևիկ Ամիրյանը ներկայանում է որպես պրոֆեսիոնալ ժուռնալիստ-հրապարակախոս։ Նրա գրական-քաղաքական գործունեությունը փայլուն էջ է մարքսիստական ժուռնալիստիկայի պատմության մեջ ընդհանրապես և Անդրկովկասում՝ մասնավորապես։ Ամիրյանի կյանքի ու գործունեության, նրա գրական ժառանգության ուսումնասիրությունը քաղաքական-դաստիարակչական նշանակություն ունի աշխատավոր մասսաների համար։

---

[1] «Բակինսկի բարոչի», № 147, 1918, հունիսի 27։
[2] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 28, էջ 9։